



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 30Լ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները և ղեկավարվելով 72-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատական համակարգի 2018 թվականի բյուջետային հայտը՝ համաձայն [հավելվածի](#):

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության դատական համակարգի 2018 թվականի բյուջետային հայտը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

2017թ. հուլիսի 18  
ք. Երևան